Դամասկոսյան վարդի եթերայուղ
Արտադրություն Հայաստանում

Ներածություն

Հայաստանը նոր քայլ է ձեռնարկում նորարարության և գյուղատնտեսության զարգացման ուղղությամբ՝ դամասկոսյան վարդերի մշակության միջոցով՝ նպատակ ունենալով ստեղծել արդյունավետ և կենսունակ արդյունաբերություն: Արժեշղթան սկսվում է Դամասկոսյան վարդերի մշակությամբ՝ երկրի նախալեռնային գոտիներում, որտեղ բարենպաստ կլիմայական և հողային պայմանները նպաստում են բարձրորակ բերքի ստացմանը: Այնուհետև ստացվում է վարդի եթերայուղը, որը ենթարկվում է որակի խիստ հսկողության և հատուկ փաթեթավորման: Այս նախաձեռնությունը նպատակ ունի հարստացնել Հայաստանի գյուղատնտեսությունը և հիմնել բարձրարժեք եթերայուղերի կայուն

Համաշխարհային շուկա

Հիմնական ցուցանիշներ

Վարդի եթերայուղի օգտագործումը զգալի աճ է գրանցում համաշխարհային շուկայում՝ պայմանավորված օծանելիքի արտադրության և կոսմետիկ միջոցների պահանջարկի ընդլայնմամբ:

Պահանջարկը 2023 թվականին

Համաշխարհային

2,139,408,000 ԱՄՆ դոլար

Ֆրանսիա

33,486,000 ԱՄՆ դոլար (ԱՏԳ ծածկագիր՝ 33012942)

Գլխավոր արտահանող երկրներ

Թուրքիա
7,743 կգ

Չինաստան
2,220 կգ

Հայիթի
3,303 կգ

Բուլղարիա
2,085 կգ

Մարոկկո
3,281 կգ

Գլխավոր ներմուծող երկրներ

Հնդկաստան
4447կգ

Իտալիա
2000կգ

Գերմանիա
1656կգ

Շվեյցարիա
1721կգ

ԱՄՆ
1548 կգ

Համաշխարհային արտահանում՝ 2023 թվականին
25,042 կգ

Աղբյուրը՝ www.trademap.org

Աշխարհի առաջատար երկրները՝

Բուլղարիան համարվում է այս վարդի եթերայուղի արտադրության համաշխարհային առաջատար՝ արտադրելով 3,000-4,000 կգ վարդի թերթիկից 1 լիտր/կգ եթերայուղ, իսկ բարձրորակ արտադրանքի ապահովման համար թարմ հավաքված թերթիկների միաժամանակյա թորման գործընթացն ունի բարձր արժեք՝ կազմելով շուրջ **8,000 ԱՄՆ դոլար 1 կգ արտադրանքի համար**:

Թուրքիան աշխարհում երկրորդ խոշոր արտադրողն է: Մասնավորապես Իսպարտայի շրջանում կենտրոնացած արտադրությունը կազմում է համաշխարհային պահանջարկի մոտ 70%-ը: Թուրքիայում նույնպես արտադրությունը մեծածավալ է, իսկ վարդի յուղի արժեքը վերջին հասնալի տվյալների համաձայն՝ կազմում է մոտ 12000 ԱՄՆ դոլար:

ALTEYA organics

MANE

ventós LEADERS IN ESSENCE

Givaudan

symrise

iff

Firmenich for good, naturally

SIGMA-ALDRICH

Վարդի եթերայուղի միջին արժեքը

Դամասկոսյան վարդի յուղի 1 կգ-ի արժեքը տատանվում է **6,020-12,000 ԱՄՆ դոլարի սահմաններում՝** կախված որակից և պահանջարկից:

Գների դինամիկա



Հնարավորությունները հայաստանում

Արտահանում և Ներմուծում

Եթերայուղերի արտահանումը Հայաստանից



Եթերայուղերի ներմուծումը Հայաստան



4 նիշ ԱՏԳ ծածկագիրը՝ 3301

Արտահանման մաքսատուրքի դրույքաչափը՝ 0%

Արտահանման հիմնական ուղղություններ 2023 թ.՝ Ռուսաստան, Ղազախստան, Ինդոնեզիա

Ներմուծման հիմնական ուղղություններ 2023 թ.՝ ԱՄԷ, Բուլղարիա, Գերմանիա, Թուրքիա, Իսպանիա, Իրան

NAIRIAN

Ընկերությունները Հայաստանում

Մասնագետները ընդգծում են, որ դամասկոսյան վարդն առանձնանում է խնամքի նվազ պահանջով, դիմացկուն է ցրտին ու կարկտին, քիչ ջրային ռեսուրսներ է պահանջում և աչքի է ընկնում իր գեղեցկությամբ:

«Նաիրիան» ընկերությունում դամասկոսյան վարդը մշակվում է 4 հեկտար տարածքում, իսկ հավելյալ 4 հեկտար հատկացված է այլ եթերայուղային բույսերի մշակության համար: 4 հեկտարից տարեկան ստացվում է 4-5 տոննա վարդի թերթիկ, իսկ դրանից էլ 80 կգ եթերայուղ:

Տարածքային բաշխվածություն

Հայաստանի նախալեռնային գոտիները, մասնավորապես՝ Կոտայքի, Արագածոտնի և Արարատի մարզերը, համարվում են իդեալական եթերայուղային վարդերի տեսակների մշակման համար: Այս տարածքները ունեն բարենպաստ ագրոկլիմայական պայմաններ՝ ներառյալ համապատասխան հող և բարձրություն: Սակայն, այս նպատակով կարելի է դիտարկել նաև բարենպաստ կլիմայական և հողային պայմաններ ունեցող այլ շրջաններ:

Վարդերի հաջող մշակման համար կարևորագույն պահանջներից է ոռոգման ջրի առկայությունը: Առաջարկվում է կիրառել կաթիլային ոռոգման համակարգեր՝ ջրի օպտիմալ օգտագործումն ապահովելու և բերքատվությունը բարձրացնելու համար: Նման միջոցառումները կարևոր են վարդերի կայուն և արդյունավետ մշակման համար՝ ապահովելով բարձրորակ բերք՝ եթերայուղի արտադրության նպատակով:

Մշակում

Դամասկյան վարդերի մշակությունը լավագույնս կատարվում է բաց դաշտերում, ոչ թե ջերմոցներում: Արդյունավետ աճի ապահովման համար առանցքային է տեղանքի և հողի ճիշտ ընտրությունը: Դաշտի տարածքը պետք է ունենա մինչև 15 աստիճան թեքություն, որը կօգնի լավ ջրահեռացմանը: Նախքան տնկելը, հողի բերրիությունը կարելի է բարձրացնել P_2O_5 և K_2O պարարտանյութերի միջոցով: Դամասկոսյան վարդի աճեցման համար համապատասխան ջերմաստիճանը 15-26°C է, բայց որոշ տեսակներ կարող են դիմակայել ավելի էքստեմալ պայմանների՝ դիմանալով -26°C-ից մինչև 35°C ջերմաստիճաններին: Դամասկոսյան վարդը առաջին անգամ աճում է ցանքից 3 տարի հետո և պիտանի է դառնում եթերայուղի ստացման համար:

Ոռոգում

Այս վարդատեսակն ունի ոռոգման ցածր պահանջներ, մասնավորապես՝ տաք եղանակային պայմաններում անհրաժեշտ է շաբաթական մեկանգամյա ոռոգում, իսկ ցուրտ եղանակին՝ 10 օրը մեկ անգամ: Դրանք դիմանում են չափավոր երաշտի պայմաններում, բայց չեն հանդուրժում չափից շատ ջրի առկայությունը: Ոռոգման համար առաջարկվում է կաթիլային մեթոդը, որը խնայում է ջուրը և բարձրացնում բերքատվությունը 30-80%-ով: Հողի խոնավությունը պահպանելու համար սև պոլիէթիլենային թաղանթով ցանքածածկումը նույնպես կիրառելի է, սակայն այս մեթոդն ունի շրջակա միջավայրի աղտոտման որոշակի ռիսկեր:

Արտադրություն

Վարդի եթերայուղը արտադրելու համար անհրաժեշտ է հիմնել թորման գործարան, որի ծախսերը կախված են սարքերի միավորների քանակից: 80 կգ եթերայուղ արտադրելու համար սարքի միավորների քանակը կարող է հասնել մինչև 20-ի: Թորման սարքերը կարող են ձեռք բերվել Բուլղարիայից, Թուրքիայից, Իրանից կամ Չինաստանից, իսկ մեկ միավորի միջին արժեքը կազմում է 13,000 ԱՄՆ դոլար:

Պետական աջակցության ծրագրեր

«Ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության» ծրագիր

Բաղադրիչ 1.Վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում

- 0.5 (յուրաքանչյուր պտղատեսակի համար)-500 հա այգեհիմնում (ներառյալ առաջին տարվա խնամքի ծախսերը)
- 0.5 և ավելի հա տարածքի համար ոռոգման արդիական համակարգերի ներդրում կամ մինչև 100 հազար խորանարդ մետր ծավալով ջրավազանների կառուցում կամ ընդլայնում
- 0.5-100 հա կարկտապաշտպան ցանցերի ներդրում
- 1.0-30 հա ծնեբեկի, պրասասոխի, ռուկոլայի, բրյուսելյան և պեկինյան կաղամբների, կոլրաբիի, գանգրակաղամբի (կալե), ցուկինիի (դեղին կամ մուգ կանաչ) և պատիսոնի, քաղցր եգիպտացորենի և հատիկաընդեղենի մշակություն

Բաղադրիչ 2. Ծախսերի մասնակի փոխհատուցում

- 0.5 և ավելի հա ոռոգման արդիական համակարգերի ձեռքբերում և ներդրում
- մինչև 100 հազար խորանարդ մետր ծավալով ջրավազանների կառուցում կամ ընդլայնում
- 0.5-3 հա բազմամյա տնկարկներում կարկտապաշտպան ցանցերի ներդրում

«Ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության» ծրագիր

Լիզինգի տրամադրման պայմաններն են՝

- Լիզինգի պայմանագիրը կնքվում է մինչև 5 տարի ներառյալ մարման ժամկետով.
- Տրամադրվող լիզինգների առավելագույն տոկոսադրույք չի սահմանվում:
- Սուբսիդավորվում է ՀՀ դրամով տրամադրված լիզինգի 10, արտարժույթով տրամադրված լիզինգի՝ 6 տոկոսային կետը, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված սահմանամերձ համայնքների բնակավայրերի տարածքներում գործունեություն իրականացնող տնտեսավարողների համար՝ ՀՀ դրամով տրամադրված լիզինգի 12, արտարժույթով տրամադրված լիզինգի՝ 7 տոկոսային կետը, եթե ձեռք բերվող սարքավորումները շահագործվելու են նույն վայրերում.

Գործարարության կանխատեսումներ

Ֆինանսական ցուցանիշներ

Ծախսերը առաջին 7 տարիներին

	Տարի 1,2,3 բազային ժ/շ	Տարի 4	Տարի 5	Տարի 6	Տարի 7
Վաճառք		$1 100 000,00	$1 155 000,00	$1 212 750,00	$1 273 387,50
Հումք		$110 000,00	$115 500,00	$121 275,00	$127 338,75
Աշխատավարձ	$450 664,26	$450 664,26	$450 664,26	$450 664,26	$450 664,26
Վերադիր Ծախսեր (ներառյալ՝ լոգիստիկ ծախսերը)		$220 000,00	$231 000,00	$242 550,00	$254 677,50
Ամորտիզացիա		$17 333,33	$17 333,33	$17 333,33	$17 333,33

Ենթադրություններ

Գինը, 1կգ

$11 000

Հասույթ, 3-րդ տարի

$1.1մլն

Կանխատեսվող վաճառքի ծավալ 100կգ
Հարկ՝ 18%
Դիսկոնտավորման տոկոսադրույք՝ 14%

Ամորտիզացիայի ժամանակահատված 15 տարի

Շահութաբերության ցուցանիշներ

Ներդրումների
նախատեսվող ծավալ
$ 1 մլն

Հասույթը 3-րդ տարվանից սկսած

PP
7 տարի

Ներդրումների
վերադարձ
21%
միջին

Զուտ շահույթի մարժա
24.3%
միջին

Ներդրումային
տոկոսադրույքի
վերադարձ 18.2%

Զուտ շահույթի
արժեքը
$77 674
7 տարի

	Տարի 1,2,3	Տարի 4	Տարի 5	Տարի 6	Տարի 7
Զուտ Շահույթ	$(450 664,26)	$302 002,41	$340 502,41	$380 927,41	$423 373,66
Դրամական հոսք	$(710 664,26)	$319 335,74	$357 835,74	$398 260,74	$440 706,99

Եզրակացություն

Դամասկոսյան վարդի եթերայուղի մշակման և ստացման գործընթացը հանդիսանում է մեծ հնարավորություն Հայաստանի այգեգործության զարգացման համար: Այս նախագիծը ոչ միայն կարող է զարգացնել գյուղատնտեսությունը, այլև էապես նպաստել ֆերմերների եկամուտներին՝ առաջարկելով մատչելի և կայուն լուծումներ: Վարդի եթերայուղի արտադրությունը, որը համարվում է բարձրարժեք ու հայտնի իր յուրահատուկ բույրով ու բուժիչ հատկություններով, կարող է միավորել բնությունն ու ժամանակակից տեխնոլոգիաները:

ENTERPRISE ARMENIA

THE MINISTRY OF ECONOMY OF
THE REPUBLIC OF ARMENIA

5a, Mher Mkrtchyan St.
0010 Yerevan, Armenia